ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՏԻԿԻՆ Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Առաքելյան.

Ի պատասխան Ձեր 04.03.2019թ. հ.01/56Մ գրության՝ տեղեկացվում է.

Մանկապարտեզների ուսումնական պլանով պարապմունքներն անց են կացվում սեպտեմբերից մինչև հունիս ամիսը: Նախադպրոցական կրթական համալիր ծրագրի համաձայն՝ տարին երկու անգամ՝ հունվարի սկզբին և մարտի վերջին, երեխաների հոգնածությունը կանխելու նպատակով նախատեսվում է արձակուրդ՝ մեկ շաբաթ տևողությամբ, որի ընթացքում կիրառվում են մարմնակրթական և երաժշտառիթմիկ պարապմունքներ: Համաձայն Երևանի քաղաքապետի 04.03.2016թ. հ.706-Ա որոշմամբ հաստատված օրինակելի պայմանագրի 2.8 կետի՝ մանկապարտեզում երեխայի տեղը պահպանվում է նրա բուժման, արգելափուլի, ծնողի հիվանդության, գործուղման, արձակուրդի դեպքերում, ինչպես նաև ամռան շրջանում ոչ ավել քան 75 օր՝ անկախ ծնողի արձակուրդից, բացառությամբ՝ երեխայի ստացիոնար բուժման դեպքերի տևողությունից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ